ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
2022, № 1, 46-52 *Ֆինանսներ*
https://doi.org/10.46991/BYSU:G/2022.13.1.046

ՀԱՐԿՄԱՆ ԱՐԴԱՐԱՑԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ

ԱՐՓԻՆԵ ԵԳԱՆՅԱՆ

Սույն հոդվածում քննարկվում է ժամանակակից հասարակությունում հարկագանձման արդարության և տնտեսական ու հարկային արդյունավետության կապը: Տեսական նյութի գիտական վերլուծության մեթոդով, հաշվի առնելով սոցիալական արդարության և՛ տնտեսական, և՛ հարկագանձման արդյունավետության արդի հիմնախնդիրները, վերլուծության է ենթարկվում այն վարկածը, թե արդար հարկային համակարգը նպաստում է տնտեսական արդյունավետությանը: Սոցիալական և տնտեսական համակարգերի հարափոփոխ պայմաններում հարկագանձման արդյունավետության և արդարության փոխկապվածությունը դասական բանավեճ է: Այս հակասությունը հանգեցնում է տնտեսավարող սուբյեկտների և անհատների շահերի անհամաչափ բավարարման և կոնֆլիկտների առաջացման: Միաժամանակ խնդրի օպտիմալ լուծումը նպաստում է տնտեսական զարգացմանը: Հարկումը եկամտի վերաբաշխման եղանակներից է: Սակայն նման վերաբաշխումը բախվում է անհատների կողմից արդարության ընկալման և տնտեսական արդյունավետության խնդրին: Արդարությունը հասարակական առողջ հարաբերությունների հիմնարար սկզբունքներից է: Անարդյունավետությունը ռեսուրսների անբավարարության ուղղակի հետևանքը չէ: Հնարավորությունների ցանկացած անհավասարություն հանգեցնում է անարդյունավետության, և հակառակը՝ հավասարությունը նպաստում է տնտեսական արդյունավետությանը: Արդարության հակասությունների լուծումը՝ յուրաքանչյուր անհատի պահանջմունքների բավարարումը, շահերի պաշտպանությունը և տնտեսական արդյունավետության հավասարակշռության հաստատումը, ընդհանուր առմամբ կարող է նվազեցնել ժամանակակակից հասարակությունում առկա բազմաթիվ խնդիրների սրությունը:

Բանալի բառեր – *հարկային համակարգ, հարկային քաղաքականություն, հարկային արտոնություն, հարկման համաչափություն, տնտեսական արդյունավետություն, հարկային բեռ, սոցիալական արդարություն*

Շուկայական հարաբերությունների կայացման փուլում գտնվող երկրի համար կարևոր պայման է սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված՝ տնտեսության պահանջները բավարարող հարկային համակարգ ձևավորելը: Պետական կարևոր այդ գործառույթում առանցքային

է ֆիսկալ գործիքների դերը, որոնց գերակշիռ մասը կենտրոնացված է հենց հարկային համակարգում: Ֆիսկալ գործիքների արդյունավետություն նշանակում է հարկային համակարգի արդյունավետություն, որը կարևոր երաշխիք է պետական գործառույթները պատշաճ իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական բազան ձևավորելիս:

Հարկային համակարգի արդյունավետության կարևոր պայման է սոցիալական արդարություն ապահովելը: Այդ տեսանկյունից էական է հասարակության գործունեության տնտեսական արդյունքներն արդարացի բաշխելը: Մինչդեռ Հայաստանում շուկայական հարաբերություններին անցումը սկսվեց պետական գույքի սեփականաշնորհմամբ ու մասնավորեցմամբ, որի հետևանքով հասարակության տարբեր շերտեր հայտնվեցին տնտեսապես անհավասար վիճակում: Ձեռք բերելով արտադրական մեծ հզորություններ՝ միևնույն ժամանակ չիրականացվեցին անհրաժեշտ ներդրումներ այդ հզորություններն արդիականացնելու և ժամանակակից արտադրություններ կազմակերպելու ուղղությամբ: Այստեղից էլ առաջացավ սկզբնական անհավասարությունը բիզնեսի ներկայացուցիչների միջև՝ ստեղծելով դժվար լուծելի տարբեր խնդիրներ գործարարների համար, հատկապես նրանց, որոնք իրենց գործունեությունը պետք է սկսեին զրոյից: Հնարավորությունների սկզբնական անհավասարությունն անշուշտ ազդեց երկարաժամկետ զարգացման վրա: Հանրահայտ է, որ հնարավորությունների անհավասարությունը հանգեցնում է սոցիալական անհավասարության՝ բացասաբար ազդելով տնտեսական զարգացման վրա:

Անհրաժեշտ տնտեսական ինստիտուտները հիմնված են արդարության սկզբունքի վրա. որպեսզի հասարակությունը բարգավաճի, հարկավոր է բնակչության համար խթաններ ստեղծել ներդրումների և նորամուծությունների համար: Հարկ է նշել, որ տնտեսական արդյունավետությունը և տնտեսասկսան արդարությունը փոխկապակցված երևույթներ են. քանի որ տնտեսական արդարությունը հանգեցնում է բարգավաճման, հետևաբար այն նպաստում է նաև տնտեսական արդյունավետությանը: Այսօր տնտեսական զարգացման գործընթացի հիմքում ընկած է սոցիալական արդարությունը[1]:

Արդարության դրույթը բավականին հաճախ սահմանվում է արհեստական կառույցների և ոչ թե համընդհանուր ընկալելի երևույթի միջոցով[2], և եթե ինչ-որ տեղ գոյություն ունի արդարության ընդունված ձև, ապա այն համընդհանուր կիրառելի չէ[3]: «Հարկային արդարություն» հասկացությունը հարաբերական է, որը, կախված տնտեսական վիճակից և իրավական հարաբերությունների կանոնակարգվածութ-

[1] Տե՛ս **Huddleston, J**., Search for a just society. University Publishing House "St. Kliment Ohridski", 2001 (1989):

[2] Տե՛ս **Rawls, J**., A Theory Of Justice, The Belknap Press Of Harvard University Press Cambridge, Massachusetts, էջ 399:

[3] Տե՛ս **Walzer, Michael**, Spheres of justice. Critique and Humanism Publishing House, 2010:

յան աստիճանից, կարող է մեկնաբանվել տարբեր տեսանկյուններից։ Այս իսկ պատճառով դիտարկվում են հարկային արդարության երկու՝ հորիզոնական և ուղղահայաց սկզբունքներ։

Հարկային համակարգը գործում է հորիզոնական հավասարության սկզբունքով, երբ համանման բնութագրիչներ ունեցող անձանց վերաբերվում են նույն կերպ։ Հորիզոնական հավասարության սկզբունքը չափազանց կարևոր է և ամրագրված է արևմտյան գրեթե բոլոր սահմանադրություններում։ Ռասայական, սեռական, դավանական խտրականությամբ հարկային համակարգերը հորիզոնական անհավասար են և հակասահմանադրական։ Հարկման հորիզոնական հավասարության գաղափարը հստակ սահմանելու համար անհրաժեշտ է պարզել, թե ինչ են նշանակում համանման բնութագրիչներով անձ և միանման վերաբերմունք։ Գործնականում կան բազմաթիվ օրինակներ, որտեղ հարկային համակարգը սպառման տարբեր հակումով անձանց վերաբերվում է տարբեր կերպ։ Եթե ընդունենք, որ սպառման տարբեր հակումը կարևոր բնութագրիչ է և տեղ ունի հարկային համակարգում, պետք է ընդունել նաև, որ բացարձակապես միանման անձինք գոյություն չունեն։ Որո՞նք են այդ դեպքում ընդունելի տարբերությունները։ Եթե համարենք, որ ոչ մի տարբերություն ընդունելի չէ, ապա առնվազն սեռը, տարիքը և ամուսնական կարգավիճակը չեն կարող կարևոր չլինել։ Ներկայումս կան դեպքեր, երբ թոշակառուին վճարվող կենսաթոշակը չի հարկվում եկամտային հարկով, կամ ամուսնական կարգավիճակով պայմանավորված՝ տրամադրվում են հարկային արտոնություններ։ Ակնհայտ է, որ օրենսդիր մարմինը, ելնելով կոնկրետ իրավիճակներից, կարող է նախատեսել նման դեպքեր։ Հարկման որոշ սկզբունքների տեսանկյունից դրանք կարող են որակվել խտրական։ Սակայն նման «խտրականությունները» հնարավոր են՝ պայմանավորված սոցիալական իրավիճակով և անձանց վճարունակությամբ։ Նշված տարբերակումներից բացի, անհրաժեշտ է դիտարկել նաև հարկման նկատմամբ զգայունության աստիճանը, որը կարող է ազդել հարկման փոփոխության հետևանքով առաջացող տնտեսական անարդյունավետության մեծության վրա։ Ընդհանուր առմամբ, որքան ավելի զգայուն է հարկատուն հարկման փոփոխությունների նկատմամբ, այնքան անարդյունավետ է գործում տնտեսությունը։ Ավելի ցածր եկամուտ ունեցող անձանց զգայունությունն ավելի բարձր է։ Մասնավորապես, ընտանիքները, որոնք ստանում են միանման եկամուտ, բայց ընտանիքի անդամների թիվը տարբեր է, բնականաբար հարկման նկատմամբ ունենում են տարբեր զգայունություններ։ Շուկայական սկզբունքների տեսանկյունից, երբ ավելի հարուստ մարդը վճարում է ավելի քիչ հարկեր, կարող է վտանգվել սոցիալական արդարության այն սկզբունքը, ըստ որի՝ հարուստ մարդը պետք է վճարի ավելի բարձր հարկեր։ Օրինակը ցույց է տալիս նաև «միանման վերա-

բերմունք» հասկացությունը սահմանելու դժվարությունը: Ընդունենք, որ կինը և տղամարդը ստանում են հավասար եկամուտ և պետք է վճարեն հավասար սոցիալական վճար: Արդյո՞ք սա նշանակում է, որ նրանք երկուսն էլ պետք է հավասար կենսաթոշակ ստանան: Սակայն կինն ընդհանուր առմամբ ավելի երկար է ապրում, քան տղամարդը, հետևաբար կնոջ ստացած ընդհանուր գումարն ավելի մեծ կլինի, քան տղամարդունը: Մարդկանց զգալի մասը դա անարդար է համարում, քանի որ ըստ հորիզոնական հավասարության սկզբունքի՝ համանման անձանց պետք է հարկել նույն սկզբունքով: Այլ խոսքով՝ հորիզոնական հավասարությունը հաճախ ոչ ավելին է, քան երևակայական իրականություն:

Ուղղահայաց հավասարության սկզբունքը հաճախ հակադրվում է այն տեսակետին, որ որոշ մարդիկ ունակ են վճարելու ավելի բարձր հարկեր, քան մյուսները: Դա պայմանավորված է այնպիսի խնդիրներով, ինչպիսին է, օրինակ, ավելի բարձր հարկ վճարողների, վճարվող հարկի մակարդակի, գործնականում այդպիսի և հարկային այլ մոտեցումներ կիրառելու վերաբերյալ որոշումներ ընդունելը:

Սովորաբար գոյություն ունեն անհատների կամ անձերի վճարունակությունը գնահատելու չափանիշներ, սակայն նույնիսկ դրանք կիրառելիս կարող է հարց ծագել՝ ելնել նրանց տնտեսական ունեցվածքի՞ց, թե՞ ստացած օգուտներից: Որոշ դեպքերում նույն չափորոշիչները, ինչպիսիք են սպառումը և եկամուտը, կարող են կիրառվել ինչպես հարստությունը, այնպես էլ վճարունակությունը գնահատելու համար: Ժողովրդավարական շատ հասարակություններում ընդունված է, որ ավելի հարուստներն ունակ են և պետք է վճարեն ավելի բարձր հարկեր: Այդ առումով ուղղահայաց հավասարությունը, նույնիսկ եթե այն երևակայական է, ավելի տարածված է:

Համաշխարհային բանկի մասնագետները պնդում են, որ անարդարություն առաջացնող ինստիտուտների և մակրոտնտեսական ճգնաժամի միջև գոյություն ունի փոխադարձ կապ, դրա հետևանքները բացասաբար են ազդում սոցիալական արդարության և երկարաժամկետ տնտեսական աճի վրա[4]: Երկկողմանի կապ գոյություն ունի նաև արժեզրկման հետևանքների և ծախսերի միջև: Առաջինը ռեգրեսիվ բնույթի է, իսկ դրա ազդեցությամբ ծախսերը՝ պրոգրեսիվ: Մեր երկրում կիրառվող եկամուտների և կապիտալի հավասարաչափ հարկագանձումն առկա արժեզրկման պայմաններում նպաստում է ծախսերի անհամաչափությանը: Այսօր մեզանում հարկային քաղաքականությունը ենթարկված է կապիտալի շահերին և արտահայտվում է միևնույն դրույքաչափով հարկմամբ՝ անկախ արտադրողների ստացած շահույթի մակարդակից: Այս տեսանկյունից հանրապետությունում

[4] Տե՛ս **Andrew G. Berg** and **Jonathan D. Ostry**, Inequality and Unsustainable Growth: Two Sides of the Same Coin? IMF Staff Discussion Note, April 8, 2011 SDN/11/08, 8-16:

հարկագանձման և հարկային քաղաքականության արդյունավետությունն ու արդարությունն ըստ էության հակադրվում են: Այս վիճակը կարելի է բացատրել նրանով, որ հարկագանձման կարևորագույն նպատակը պետության խնդիրների և գործառույթների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հավաքագրելն է, իսկ դրանց մակարդակը որոշվում է նախատեսվող ծախսերով:

Արդյունավետ հարկային քաղաքականությունն անշուշտ պետք է մեծապես նպաստի նախատեսվող պետական ծախսերն իրականացնելուն և դրված նպատակներին հասնելուն, սակայն առանց արդար հարկագանձման համակարգի առնվազն երկարաժամկետ հեռանկարում կարող են արձանագրվել բացասական արդյունքներ: Դրա հավանականությունն ուղղակիորեն պայմանավորված է հարկային բազայի և հարկման դրույքաչափի միջև առկա կապով: Այլ խոսքով՝ եթե հարկային մուտքերը բավարար չեն պետության խնդիրները լուծելու համար, ապա հարկային համակարգում առաջանում է արդարության խնդիր:

Հասարակությունները և պետությունները մշտապես ձգտել են պետական կառավարում, տնտեսական արդյունավետություն և սոցիալական արդարություն ապահովելու գործընթացների միջև հնարավոր լավագույն հարաբերակցություն հաստատելուն: Այդ խնդրի լուծման գործում չափազանց մեծ է հարկային քաղաքականության և հարկային օրենսդրության դերը, որոնց արդյունավետությունն անշուշտ կորոշվի նշված հարաբերակցության հաստատմամբ և հասարակությունում ձևավորված արժեքների հանրային ընկալմամբ: Ցանկացած առաջընթաց նշված ուղղություններով կհանգեցնի հասարակական շահերի պաշտպանության և բնակչության բարեկեցության բարձրացման, ինչպես նաև բազմաթիվ կոնֆլիկտների սրության նվազեցման:

Արդյունավետ հարկային քաղաքականությունը ենթադրում է պրոգրեսիվ հարկագանձում, պասիվ եկամուտների, գույքի և ժառանգության հարկային դրույքաչափերի ավելացում, իսկ տնտեսական արդյունավետությունը պահանջում է, որ հարկերը հնարավորինս քիչ ազդեն գների վրա: Հարկային քաղաքականությունը պետք է ուղղված լինի արտադրության և սպառման նկատմամբ չեզոքություն ապահովելուն՝ մեծապես նպաստելով արդարության սկզբունքին: Արդարությունը, հանդես գալով որպես տնտեսական զարգացման շարժիչ ուժ, միշտ նպաստել է տնտեսական արդյունավետությանը: Արդյունավետությունը նպատակների և կոնկրետ հասարակական արդյունքների՝ էֆեկտների հասնելու և խնդիրներ լուծելու աստիճան է, որոնք ձևակերպված են համապատասխան ծրագրերում և և իրականացվող քաղաքականությունում[5]:

Արդյունավետության և արդարության խնդիրը հարկային քաղա-

[5] Տե՛ս **Վ. Բ. Բռստանջյան**, Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում, ԵՊՀ հրատ., 2017, էջ 293:

քականությունում առավել ցցուն արտահայտվում է ֆիսկալ բեռի ձևավորման և տնտեսության խթանման գործընթացներում: Տնտեսության զարգացման պայմանները բարելավելու նպատակով հարկային համակարգում կիրառվում են խթանող գործիքներ: Նման գործիքներից են, մասնավորապես, հարկային արտոնությունները, որոնք հարկատուի վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումներ են՝ մաշվածության հաշվառում, հարկային տոկոսադրույքների մակարդակների փոփոխում, ներդրումների և նորամուծությունների խթանում և անհրաժեշտ հարկային այլ գործողությունների իրականացում:

Հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ որքան մեծ է հարկային բեռը, այնքան վատ է ներդրումային միջավայրը: Սակայն, մյուս կողմից, բյուջետային միջոցներ հավաքագրելը նպատակ ունի ֆինանսավորել ոչ միայն տնտեսությունը, այլև պետական այլ գործառույթներ, որոնցում Հայաստանի պարագայում բավականաչափ շատ են սոցիալական ոլորտի խնդիրները: Բյուջեն պահանջարկի գեներացման մեխանիզմ է, և հարկագանձման օբյեկտից և հարկերի հաշվին ֆինանսավորող ծախսերից կախված՝ փոխվում է դրա և՛ մոտիվացիան, և՛ արդյունավետությունը: Օրինակ, եթե մեծ չափով հարկային բեռ է ընկնում ավելի ապահովված անձանց վրա, և գանձվող միջոցներն ուղղվում են տնտեսության խթանմանը, շահում են ոչ միայն ապահովված, այլ նաև նվազ ապահովված անձինք, քանի որ տնտեսական զարգացումը նպաստում է նրանց դրության բարելավմանը: Եվ հակառակը, ոչ բավարար հարկագանձումը ուղղորդում է ավելի ապահովված անձանց՝ ներդրում կատարելու ավելի լավ գործող տնտեսությունում, որը դառնում է իրենց կենսական շահերի կենտրոնը: Այդպիսով, թերի հարկագանձումը պատճառ է դառնում ազգային հարստության մի մասը երկրից դուրս հանելուն:

Շուկայական հարաբերությունների պայմաններում պետության սոցիալ-տնտեսական հավասարակշռվածությունն ապահովելու գործում կարևորագույն դերն անշուշտ ֆիսկալ գործիքներինն է: Դրանք հիմնականում գտնվում են հարկային համակարգում, որի արդյունավետությունը ենթադրում է տնտեսական հարաբերությունների տարբեր մասնակիցների շահերի համաձայնեցվածություն, տնտեսական համակարգի բոլոր տարրերի միջև ռացիոնալ հարաբերակցություն, դրա որակական հատկանիշների խելամիտ բաշխվածություն, առանձին ենթահամակարգերի զարգացման տեմպերի խթանում և այլն: Հարկային համակարգի անհավասարակշռվածությունն առաջացնում է ոչ հավասարաչափ հարկային բեռի բաշխում և որպես արդյունք, հանգեցնում է տնտեսության ստվերային հատվածի ավելացման: Վերջինս էլ իր հերթին կարող է հանգեցնել պետության տնտեսական անվտանգության իրական և հավանական վտանգների:

АРПИНЕ ЕГАНЯН – ***Некоторые вопросы оценки справедливого налогообложения и эффективности налоговой системы.*** – В данной статье рассматривается взаимосвязь между справедливым налогообложением и экономической и налоговой эффективностью в современном обществе. Методом научного анализа теоретического материала с учетом актуальных вопросов социальной справедливости и экономической, в частности, налоговой эффективности, анализируется гипотеза о том, что справедливая система налогообложения способствует экономической эффективности. Взаимосвязь между налоговой эффективностью и справедливым налогообложением в изменяющихся условиях социальных и экономических систем является классической дилеммой. Такое противоречие приводит к несоразмерному удовлетворению интересов хозяйствующих субъектов, к возникновению конфликтов. В то же время оптимальное решение проблемы способствует экономическому развитию. Налогообложение является одним из методов перераспределения доходов. Однако такое перераспределение сталкивается с проблемой восприятия индивидуумами справедливости и экономической эффективности. Справедливость является одним из основных принципов здоровых общественных отношений. Неэффективность не является прямым следствием нехватки ресурсов. Любое неравенство возможностей ведет к неэффективности, наоборот, равенство способствует экономической эффективности. Разрешение противоречий справедливости, то есть удовлетворение потребностей каждой личности, защита интересов, установление баланса экономической эффективности, в целом, может снизить остроту многих проблем в современном обществе.

Ключевые слова: *налоговая система, налоговая политика, налоговая льгота, налоговая пропорциональность, экономическая эффективность, налоговая нагрузка, социальная справедливость*

ARPINE YEGANYAN – ***Some Issues for the Assessment of Tax Fairness and Tax System Efficiency.*** – This article analyzes the relationship between justice and economic and tax efficiency. The method of scientific analysis of theoretical material, taking into account topical issues of social justice and economic and, in particular, tax efficiency, analyzes the hypothesis that a fair tax system contributes to economic efficiency. Taxes are one of the ways to redistribute income. However, every re-distribution faces a problem of justice and efficiency. Justice is the basic principle of social relations. Inefficiency is not a direct result of a lack of resources. Any inequality of opportunity leads to inefficiency; on the contrary, equality contributes to economic efficiency. Resolving the contradictions of justice, that is, meeting the needs of the individual, protecting interests, and meeting the interests of everyone, that is, efficiency, achieving balance, can generally reduce the severity of many conflicts in modern society. Using the method of scientific analysis of theoretical material, the hypothesis that a fair tax system is economically effective is researched.

Key words: *tax system, tax policy, tax privilege, tax proportionality, economic efficiency, tax burden, social justice*